




1751  
5.11. 3







Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

# THE CITIZEN.

ՖՐԷՉՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 31, 1908

ԿԻՆ 5 ՍԷՆՏ

## Տ Կ Ո Ւ Ե Բ Ի Ն Ն Ե Ր

Հայ Մահճապետական կամկավար կուսակցութեան ծրագիրը զոր Բիւզանդիոն և Ազգ ամբողջութեամբ հրատարակեցին ու քաղաքացին և ուրիշ ազգային թերթեր մաս առ մաս ի լոյս կրնծային, այս գաղութիս մէջ ալ լաւ տպաւորութիւն թողուց: Մեր բանիմաց և ողջամիտ դասակարգէն շատեր որոնց հետ առիթ ունեցած ենք ցարդ տեսնուիլ, համակարծիք են այս նոր շարժման ու կը նկատեն զայն ազգային անհրաժեշտ քայլ մը որուն պետքը թրքահայ ժողովրդին համար չեղտուած էր Օսմ. Սահմանագրութեան հաստատմամբ: Նորակազմ ազգային-քաղաքական կուսակցութիւնը, դատելով անոր ծրագրէն, կոչում ունի արգարելու Հայութեան Ազգային կուսակցութիւնը ըլլալու, վասն զի մեր ազգային իղձերն ու ձգտումները՝ ըստ կարելոյն՝ կը մարմնանան անոր մէջ, և անոր ջինջ գրօշին տակ կրնան համախըմբուիլ՝ խղճի կատարելալ հանդարտութեամբ՝ հայ մտաւորականը, եկեղեցականը, բողոքականը, յեղափոխականն ու ոչ յեղափոխականը անխտիր: Արտասահմանի Հայութիւնն ալ իր բոլոր գասակարգերով ի վիճակի է անոր բարոյական նեցուկն ըլլալ՝ առանց իր համոզումներուն դէմ կամաւ մեղանշած ըլլալու: Հարկ չկայ հետևաբար շեշտելու թէ Հ. Ռ. Կ. կրնայ մեծ դեր մը խաղալ թուրքիոյ քաղաքական հրապարակին վրայ ի նպաստ բազմակարօտ Հայութեան՝ եթէ անձնական գծուձ հաշիւներ չի դաւաճանեն ու չի քանդեն զայն:

Հանրային կարծեաց հոսանքը սակայն նպաստաւոր ըլլալով հանդերձ այս ազգային շարժումին՝ ամեն կողմերէ չենք ակնկալեր միաձայն հաւանութիւն: Եւ արդէն դաշնակցական թերթերու մէջ կոյր հակառակութիւնք սկսած են ծայր տալ, և բնաւ չի պիտի դարմանանք եթէ այս հակառակութիւնները ծայրայեղութեանց տարուին անպատասխանատու և ապակեղրոնացեալ թերթերու և թերթիկներու կողմանէ: Յարգ լուրջ քննադատութիւն մը տեսած չենք արդէն այս մասին, իսկ մեր տեսածները դաշնակցական խճճանքներ են ու անձնական հողիւններէ ծնած թշնամանանք: Այս անպատշաճ վարմունքին պատճառը վրան բաց գաղտնիք մըն է. —նոր կուսակցութիւնը կազմող տարրերու մէջ չէ՞ որ Հնչակեան անունը կրող մարդիկներ կան, ու անոր կազմին մէջ հակադաշնակցականներ լուծուած են: Այս պարագաները բաւական են անշուշտ գործը, մարդը և ամեն ինչ անգթօրէն դատափետտելու: Ո՞վ չի գիտեր թէ դաշնակցական մտլեռանդութեան այն արմատացեալ նշանաբանը թէ ինչ որ կամ ով որ Հնչակեան է կամ անոր մէկ ստուերն ունի, չարինն է՝ միասակար է, ինկած է, սևացրելու ու հրապարակէն վանելու է անպատճառ: Կայ չկայ Դաշնակցութիւն մը կայ՝ ամենակարող, ամենէ առաքինի, ուղիղ և անխալ, անկէ դուրս ամեն բան և ամեն մարդ ստատանային կը վերաբերի:

Բայց միթարական է գուշակիլ թէ Դաշնակցականաց սովորական խճճանքներն ու հակառակութիւնք չի պիտի կրնան այսուհետև իրենց ակնկալեալ արդիւնքը յառաջ բերիլ: Նոր շարժման դէմ անոնց սկսած հալածանքը խուլ ակնջներու պի-

տի հանդիպի: Հանրային կարծիքը արթնցած է. անոր բարեդար ազդեցութեան տակ ամուր գլուխները կամ պիտի կակղնան և կամ պիտի ճաթին վերջապէս: Ինչ որ ասկէ առաջ իբր մոգական դաւազան կը ծառայէր հասարակութիւնը թովելու՝ ասկէ վերջ քննութեան պիտի ենթարկուի. ինչ որ մութ անկիւններու մէջ իբր խորհրդաւոր գաղտնիք իրարու կը հաղորդուէին մարդորսութեան համար, օթեկցան: Լոյսի մէջ գործելու է հիմա: Օգգապազութեան օրերը անցած են: Հ. Ս. Ռ. կուսակցութեան ծրագիրը լոյսի կրնայ դիմանալ:

\* \* \*

Նոր կուսակցութեան ծրագրին մէջ եթէ կայ բան մը որ ուրիշ ամեն կէտերէ աւելի անհաշտ է մեր համոզումներուն հետ, այն յօդուածն է որ "վեհապետին անձեռնմխելիութիւնը և անպատասխանատուութիւնը Սամանագրութեամբ երաշխաւորեալ" կընդունի: Մանր դեղազատ մըն է այդ անշուշտ հայ կուսակցութեան մը համար, բայց քանի որ Սահմանագրութիւնը զայն ընդունած է արդէն ու երիտասարդ թուրքերը հաճութիւն տուած են անոր, տկար հայ կուսակցութեան մը համար քաղաքագիտական անխոհմտութիւն մը պիտի ըլլար թերևս աքացել անոր դէմ: Դատ դիւրին էր անշուշտ հակառակիլ անոր, շատ դիւրին էր նմանապէս ընկերվարական օրէնքներ պահանջել երիտասարդ թուրքիոյ համար, բայց ինչիւր է թէ այդ հակակրութիւն յառաջ բերող թուրքէ պահանջները ինչ օգուտ կրնային արտադրել ներկայ պարագաներու տակ երբ "Չեզ նորէն կը լարենքի" սպառնալիքները արմատախիլ չեն եղած տակաւին: Թուրքիոյ մէջ գործել ուզող քաղաքական հայ կուսակցութիւն մը կառավարութեան մանրանկարը ըլլալու է հիմնական հարցերու մէջ: Հեռուէն նստիլ քննադատելը շատ դիւրին է: Մրագիրը գծող փորձառու հայ քաղաքագէտները վստահ ենք թէ մենէ ոչ նուազ հակառակ են այդ յօդուածին վոր հարկադրեալ են որդեգրել: "Ստատանան ալ դժօրք երթալ չուզեր, կըսէ առածը, բայց կը տանին զայն ստիպմամբ": Դատ աւելի դառն զոհողութիւններ ըրած է թրքաքաղաքը անցելոյն մէջ:

\* \* \*

Պօլսոյ մէջ հրատարակուի սկսած է, և շուտով կը մեռնի: Արդուեան խմբակին սրկանը Չայն Հայրենեաց . . .

Ամմա՛ երես: Չայնին ձայնը խղզելու համար հանրութեան դատաժնը շուտով պիտի կրնայ սակայն իր պարտականութիւնը կատարել: Գողցուած դրամները շուտով կը հատնին,

\* \* \*

ԶԱՄԻՉԸ օրուան հացի խնդիրն է տակաւին Ֆրէզնօի համար: Քսանհինգ հազար թընէ աւելի չժախտած չամիչ կայ այգեպաններուն քով, որ ոչ միայն վտանգի ենթարկուած է այլ և մեծ սպառնալիք մըն է յաջորդ բերքին: Ֆրէզնօ հանրութեան պահանջէն աւելի չամիչ արտադրել սկսած է արդէն: Չորս տարի առաջ այս մասնաւոր կէտը շեշտուած էր այս սիւններու մէջ իբր շրջութեան խրատ անոնց որոնք անխելի գիներ կը վճարէին այգիներու՝ էճէնթներու մեղրախառն խօսքերուն հաւատ ընծայելով ու շանալով չամիչի խարուսիկ դներէն:

Այգեպաններու ընկերութիւնը ամեն կարելի միջոցներ փոր-


ձևի է յետոյ, իր վերջի ընդհանուր ժողովին մէջ, չծախուած չա-  
միչները գոնէ ձեռքէ հանելու համար, փէքըրներուն մէջ առա-  
ջարկը ընդունեց, որ երկու հաւասար շարեաց մին է թերևս: Սա  
է առաջարկը. Յոյր չամիչները, կանխաւ պատրաստուած պայ-  
մանագրութեան մը համաձայն որ ստորագրուած է ցարդ քանի-  
ներէ միայն, յոնձնուին փէքըրներուն, և ասոնք փէք, սիտ են.  
ընեն և Արևելք զրկուելու պատրաստ վիճակի մէջ դնեն զանոնք՝  
պայմանաւ որ երբ վաճառում ըլլայ, փէքըր նախ իր ծոխքերը,  
փառենտ գլուխ երկու սէնթի չափ, վար դնէ ու մնացեալը տայ  
այգեպանին: Թող ի վրայ թերևս հեշտ հընչէ այս՝ շատերու ա-  
կանջին, բայց փորձառու այգեգործը որ նոյնօրինակ գործեր ու-  
նեցած է փէքըրներուն հետ, գիտէ թէ ինչ անկանելի զեղա-  
հատ է այն: Հետևաբար այն այգեպանները որք այս քանի մը  
օրերուն քէջ պիտի ստորագրեն պայմանագիրը, կամաւ բայց հար-  
կադրուած, փորձեալը պիտի փորձեն նորէն: Գոյն ինկած մար-  
դը օձին ալ կը փաթթուի: Ազատութիւն մաղթենք:

\*\*\*

Չամիչի այս յուսահատական օրերուն մէջ շահեկան է հայ  
այգեպաններու ոմանց այն հարցապնդումը թէ շահաւոր պիտի  
չըլլա՞ր մերիններուն համար հասկացողութեան մը գալ Սերոր-  
եաններու հետ, որոնց երկարամեայ փորձառութիւնը ոչ ոք կը  
ժխտէ, և անոնց ձեռքով Հայոց չամիչը ծախել յԱրևելու: — Կը  
խօսուի արդէն հիմայ թէ Յ. Սերորեան տեսնալով որ իրենց  
անձնական բերքը անկարելի պիտի ըլլար հոս ծախել, քանի մը  
շարաթ առաջ Երբակօ գնաց ու զայս վաճառեց հոն իր հին յա-  
ճախորդներուն գոհացուցիչ գնով: — Այո՛, շատ օգտակար և շա-  
հաւոր գործ մը պիտի ըլլար այդ ...:

Թուրքերն իրաւունք ունին երբ Հայու վերջի խելքին կը  
նախանձին: Բայց ժամանակը թերևս բոլորովին անցած չէ հիմայ:

ՆՈՐ ԳԻՒՏԸ



Այս է այն նոր  
գիւտը որ Յ. Յով-  
սէփեան Փէթընթ  
ըրաւ վերջերս "Իդ  
փրէսս Պօրտ" ան-  
ուան տակ: Չայն  
տեսնող ամեն գե-  
ձակ հատ մը գոնէ  
դնած է անկէ:

Տեղական և շրջակայ տեղեաց պահանջը գոհացնելու նպա-  
տակով ընկերութիւն մը կազմուած է այժմ որուն հասցէն է 413  
Էջփ փողոց. Հարկ չկայ ըսել թէ քիչ մը առատ զրամագլխով սա  
ընկերութիւնը կրնայ մեծ ապագայ ունենալ: Հայ զրամագլուխը  
եթէ չօգտուի անկէ՝ փաթէնթը ի հաճկէ օտարներու ձեռք կանց-  
նի շուտով. Երանի էր թէ չամիչով կուրացեալ տեղական հայ  
աչքերը բացուէին քիչ մը այսպիսի պատեհութեանց առջև: Մոռ-  
նալու չէ թէ այսպիսի պղտիկ գիւտերն են որ միլիոններ շահած  
են ու կը շահին միշտ.

Կը լսենք թէ Քըթնըր Կօլտըսթին ընկերութիւնը առաջար-  
կած է Յովսէփեանի սասանձել իդ Պօրտի ընդհանոր ներկայա-  
ցուցչութիւնը Քալիֆօրնիոյ համար: Հրեաները շատ արթուն են  
այսպիսի պատեհութիւններու առջև:

ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԺՈՂՈՎԸ

Անցեալ Կիրակի երեկոյ տեղի ունեցաւ ատիկա վաթսունի  
չափ ամուսնացեալ Հայերու ներկայութեամբ: Վահէ Գրիգորեան  
յանձնախմբի մը կողմէ ներկայացուց ժողովին անտպագրելի

խնդիրը որ նողկանք ու զայրութ պատճառեց ներկայից: Ժողո-  
վը մնայուն յանձնախումբ մը ընտրեց և պաշտօն տուաւ անոր  
արգիլել ամեն օրինական միջոցներով՝ ծննդարեւութեան առթիւ՝  
ինքնակոչ մանկաբարձ կիներու վարձումը. նոյնօրինակ պարա-  
գաներու տակ՝ բժիշկ և գրամ հայթայթել կարօտեալ ընտանիք-  
ներու, և կառավարութեան ձեռքով պատժել տալ անխտիր այն  
ամէն յանցաւորները որոնք պատճառ կը ըլլան այսուհետև որ և է  
չարեաց, աղետի կամ ապօրէն դէպքի: Մնացեալը թող հասկը-  
նան անոնք որոնց կուղղուին այս տողերը: Ոչ միայն յանձնա-  
խումբը այլ ընտանիքի տէր ամեն պատուաւոր հայ պիտի աչա-  
լուրջ հսկէ ասկէ վերջ: Ինքնակոչ դայակները թող մուրան՝ եթէ  
ապրուստի ուրիշ ճամբոյ, չունին.

ՄԱՂԹԱՆԱԿ ՄԸՆ ԱԼ

Դրօշակ կը դրէ թէ Հոկտ. 11ին Պրուսէլի մէջ տեղի ունե-  
ցեր է միջազգային սօցիալիստական բիւրօի նիստերը: Հայ Յ.  
Դաշնակցութիւնը ներկայացուցած է Ռուսաստանի ոօց. - յեղ.  
ենթասեկցիտի մէջ ընկեր վարանդեան որ զօրաւոր ատենախօ-  
սութեամբ մը Դաշնակցութեան ողջոյնը հաղորդած է Ինտէրնա-  
ցիօնալին: Հետեւեալ օր վարանդեան առաջարկած է ժողովին  
ներկայացուցչութեան իրաւունք տալ Դաշնակցութեան թուրքաց  
Հայաստանին համար: Քիչ մը ատեն այս խնդիր քննութեան են-  
թարկուելէ վերջ՝ ժողովը չորս քուէի իրաւունք տուած է Թրք-  
քաջայ ներկայացուցչութեան մը Ինտէրնացիօնալի մէջ ենթա-  
սեկցիտի ձեռով:

Յաղթութենէ յաղթութիւն: Ենորհաւորենք զայն. . .

Փաթընթ		Ըսթէյփել
Վիսի		Սդէնտոր
Կըն մէթ		Կօշիկներ
Ուէլուօր		Արժէք
Ուէլթս		5, 6 և 7
և այլն		Տոլար

**ՖԻԼՏԵԼՖԻԱ ՇՈՒ ԸՍԹՕՐԸ**  
 ոչր կրնաս գնել մարդոց վիսի, փե-  
 րընք ու կըն մէթը 4, 5 ու 6 տողարի  
**ԿՕՇԻԿՆԵՐԸ 2,50ի**

Տղայոց կօշիկներ աղէկները - 1,50 և 2 տողարի  
 Մարդոց Գործի կօշիկներ - 1,90 և 2 տողարի  
 Մարդոց գործի բարձր պուժ - - 4 տողարի

Քիչ դրամով սեծ Մակարկոչքիւն

ՖԻԼՏԵԼՖԻԱ

2031 Մարտոգա ՇՈՒ ԸՍԹՕՐ Ֆրէզնօ, Քալիֆօրնիա  
 Փողոց



Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

Թէլէֆօն ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ Մէյն 2595
344 ՃԷՑ Փողոց, Ֆրէզնօ: 2. ԷԿԻՆԵԱՆ, ԽՍՐԱԳԻՐ.
Նամակ գրամ, կամ ծրար զրկել հետեւայ հասցէին՝
To The Citizen Publishing Co.
P. O. Box 1224. FRESNO, CAL.

ԱՊՍՆԱԳԵԱԼ ԷՊԸՍԹՐԷՔՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՏԵՂԸ

Երբոր գնելիք երկրիդ ճշգրիտ մէկ էպսթրէքթը ձեռք կը
տեսնուի հաճելի բան մըն է զիտնայը թէ նոյն էպսթրէքթը քեզ
տուող ընկերութիւնը վստահելի հաստատութիւն մըն է, և թէ
ունի իր ետեւ զբաղման կարողութիւն նոյնը ապահովելու հա-
մար: Կարելի է այս բանը ըսել Ֆրէզնօ Բառնթի էպսթրէքթ
Քարնի ընկերութեան մասին որ հաստատուած է 1871 թուին և
ունի 100,000 տուարի վճարեալ զբաղման: Այս ընկերութիւնը
կուտայ երկրի մը կատարեալ էպսթրէքթը, զաւանտս դուրս բը-
նակողներուն թէքսերը կը վճարէ իրենց հաշույն և 'էքսթ' գործ-
առնութեանց կը նուիրէ մասնաւոր ուշադրութիւն: Եթէ կը խոր-
հրա Կտոր մը երկիր գնել՝ հարկւրաւոր տուարներ կրնայ ըլլալ որ
չաւիտ եթէ գնելէ առաջ այսպիսի ընկերութենէ մը ստանաս նոյն
երկրին կատարեալ էպսթրէքթը:

ՀՕՐԷԼ ՆԱՏԻԷՕ ԼՕՍ ԱՆՃԸԼԸՍ


Սմեակեգործական գիրք - - - - - Չափաւոր գին
- Առաջին և Սփրինկ փողոցներուն անկիւնը -

ՄԱՐՇԸԼ՝Ս ՆԸՐՍԸՐԻՍ

Ի. Բէլիփթը և Է. Բէլիա ծառերու, արմաւենիներու, ամեն
տեսակ պտուղի և զարդի ծառերու և որթերու
ԷՍ. ՈՒ. ՄԱՐՇԸԼ և ՈՐԳԻ, Ֆրէզնօ, Քալիֆորնիա
Օֆիս, 1143 Ա. փողոց, . . . . . Փօսթօֆիս պաքս 161

ԲՈՒՐ ՆՇԱՆԱԻՐ ՀԱՅԵՐԸ ՄԵՆԷ ԿԸ
ԳՆԵՆ ՆԸՐՍԸՐԻԻ ՎԵՐՍՈՐԵԱԼ
ԱՄԵՆ ԿԱՐԳԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ՖՐԷՉՆՕ ՆԸՐՍԸՐԻ
928 Ա. փողոց, Հիւզ Հօթէլին դիմացը, Ֆրէզնօ, Քալիֆորնիա.
- Ֆ. Հ. ՈՒԻԼՍԸՆ, Սեփականատէր -
Ամեն տեսակ Պտուղի ծառեր, որթատունկեր, զարդածառեր,
Վարդենիներ և ամեն տեսակ տունկեր ու հունտեր
Պատկերազարդ ցանկի տեսարակ մը ձրի կուտանք փափաքողաց:



ՖՐԷՉՆՕ ՃԻԸԼԻՐԻ ՀԱՈՒԶ

Գ. Մ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ, Տէր
ԳՈՂԱՐԵԼԷՆՔ, ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ
- Հաստատեալ 1889 -
1156 Ա. փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա
Կաղանդի նուէր գնելու համար ուրիշի դիմելը զբաւի պարզ
կործան կը նշանակէ: Բաղդատէ մեր ապրանքներն ու գները ու-
րիշներուն հետ եթէ կը տարակուսիս: Մեր արծաթեղէնները պի-
տի վերջացնենք ու որոշած ենք աժան ծախել զանոնք: Եկուր
տես ինչ կրնաս ընտրել անոնցմէ: 25 առ 100 գեղջած ենք գները:

ձօ Սէքնիէյ Ֆ. Ճանքուէ

Ֆեմըրի Լիքըր ըՍթօր

1157 Ա. փողոց Ֆրէզնօ . . . . . Թէլէֆօն մէյն 643
2ՈՒՏ ԿԻՆԻ, ԱՆԱՐԱՏ ԱՆԻՍԷԹՕ և ՈԱԻՍՔԻ
Պառ չիայ. Գիները միշտ չափաւոր

Ֆրէզնօի Ֆարմըր'ս Նէշընըլ Պեկըր

ԳՐԱՄԱԳՂՈՒԻ ՈՒ ՍԸՐՓԸՍ 400,000.00 Տարբ
ԱԼՖՐԷՏ ԲԸԹԵՐԸ, Նախագահ ՌԻՕԼԹԸՐ ՇՈՒՄԷՅՔԻՐ, Գանձպէ,
Է. Է. ՄԱՆՀԷՅՄ, Փոխ Նախագահ և Տնօրէն.
Չարաւոր, Ապահով և պահպանողական կերպով կառա-
..... վարուած զբամատուն մը .....
U. S. DEPOSITARY.
Անհատներու, ընկերութեանց և քորփորէշըններու
- զբամահաշիւները կը հրաւիրուին -

Սմբողջ տարին բաց է այցելուներու առջև
Չմեղը այնչափ զուարճալի է հօն որչափ ամառը կրնայ ըլլալ.

Քալիֆորնիա Հար ըՄիփրիկըՍ

Երեսուն մղոն դէպ ի Հարաւային Արևելք Փօրթըրուիլէն,
ԹՈՒԼԱՐԻ ԳԱԻԱՌԻ ՄԷՉ, ԲԱԼԻՖՕՐՆԻԱ.
3300 ոտք բարձր ծովին մակերևոյթէն
Առաջին կարգի պանդոկ. վարձու վրաններ ու տուններ
Պանդոկի Գիներ - Շաբաթը 12 տուար՝ բաղանիքով միասին.
Աս Զերմուկին ջուրերը յանձնարարուած են մասնաւորապէս
30ԴԱՑԱԻԻ, ՏԵՆԴԻ, ՄՈՐԹԻ, ԱՐԵԱՆ և ԼԵԱՐԴԻ
ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՐ
Փորթըրուիլէն ըսթէյճը կը մեկնի ամեն օր՝ Կիրակիներէ
զատ. Երթեկութեան գին 5 տուար: Ուրիշ մանրամասնութեանց
համար օֆիսին դիմելու կամ գրելու է առ՝
ԲԱԼԻՖՕՐՆԻԱ ՀԱԹ ԸՍՓՐԻՆԿՍ,
Հաթ Ըսփրիկս, Թուլարի Բաւնթի, Քալ.
Կարժէ լսել վկայութիւնը այս տարի մեզ այցելող Հայերուն

ՄԱՔ ՆԻԸԼԻ ԱՄԵՆ ԱԸՆՏԻՐ ՈՒ

ԽՈՏԱԻԷՏ ՓԷՍՉԸՐԸ
ԿԵՆԴԱՆԵԱՑԻ ՀԱՆ-
ԳՍՏԱՎԱՅՐՆ ՈՒ ԱՐՕՏԱՏԵՂԻՆ
Նօրթէ Էփելի վրայ՝ քաղաքէս վեց մղոն արևմուտք
Երբ ձիերուդ պէտք չունիս՝ հօն զրկէ զանոնք: Ամիսը մէկ տու.
Ընտիր մատակարարներ (այլըր) կը պահեն հօն: Անոնց ծառայ-
ութեան գինը 10 տուար է. Թէլէֆօն Ըսթէյթ 2284

ԵՐԿԻՐ ԳՆԵԼ ՈՒԶՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
Մեծ Պատեհոչքիւն կ'առաջարկուի

Ծախու ունինք պարագ և մշակուած երկիրներ. Պարագեր-
կիրները կը ծախենք՝ էյքըր 65, 75 և 100 տուարի. 5 տու. կան-
խիկ, մնացեալը 5 կամ 8 տարիէն վճարելի: Շատ դիւրամատչելի
գներով կը ծախենք մշակեալ երկիրներ. պայմանները դու կրնաս
որոշել: Ունինք 20, 40, 80 և 160 էյքընոց ընտիր կտորներ: Մենք
երկիր գնող Բիտլիի հայերէն կրնաք հարցնել մեր մասին.
Է. Ա. Մ. ՈՒԷՊ և ձէՕՐՁ ՆՈՐՈՑԵԱՆ, Բիտլի, Քալ.



ՆՊԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ

Արեշեղեալ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

1301 Ա. փողոց, Սիթի Հոլին գլխաց
- Թէլեֆոն՝ մէյն 3020 -
ՊՕՂՈՍ Ղ. ՎԱՐԻԱՆԵԱՆ, Տնօրէն

Eastern Tea & Coffee Store,
1301 I St., Corner Merced,
Fresno, California.

Մեր պատուական թէյն ու անման
սուրճը մեծ ընդունելութիւն կը գտնեն Հայ
ու ամերիկացի զօռարուհած յաճախորդներէ
անգամ: Գու ալ փորձէ անգամ մը:

Ունինք տեղական և արևելեան ամեն
տեսակ նպարեղէններ, ծխախոտ, անուշի-
ղէններ, ևն. ևն.

Գրի և սիկար:թի (Հիւանդանոցի) թուղթ
և ուրիշ ապրանքներ:

Թէլեֆոնով կրնաք ձեր ապսպրանքներն
ընել: Յանձնարարութիւնք փութով կը կա-
տարուին: Ապրանքները կը ղրկենք քաղա-
քիս ամեն կողմերը մեր յատուկ կառքով:

Երբակօն կը փնտռուի Տիգրան Պոյա-
ճեանի կամ Րիչըրտ Թ. Տալբրի Հասցէն:
Գրի խմբագրութեանս.

Պերրըր Հիքս Բնրևի

ԱՅ փողոց, Ֆրէզնօ, Բալ.

Չմեռը Է. Վառարանի պէտք չունիս

Թէ փայտի և թէ ամուսի համար
ամենեպատուական վառարանները ունինք

Եկուր տես զանոնք, գները հասկցիր
ու բաղդատէ ուրիշներուն հետ պնելէ
առաջ: Վստահ ենք մենք մեր ապրանաց
մասին, ըլլայ վառարան, երկաթեղէն, ներկ,
կամ ուրիշ ամեն ինչ որ ունինք ծախու.

ԿԱՂԱՆԴԻ

անհամար նոշերցոշներ

Չորս թուել անկարելի է հոս

Եկուր աչքէ անցուր զանոնք ուրիշ գնելէ
առաջ: Պիտանի նուէրները երկար կեանք
ունին: Մերինները այդ կարգէն են միայն:

Պերրըր Հիքս Բնրևի

Օ. Տարձեղիս

Ֆրանսական

Հ ա ց ա գ ո թ ծ

1220 Քէյ փողոց, Ֆրէզնօ, Բալիսօրնիա
Փորձէ անգամ մը մեր Ֆրէնչ և կամ
Քուէյթը հացերը: Երկուքն ալ կը յարմա-
րին հայկական ճաշակի:

ՓԱՅՏ

- ԵՒ -

Ա Մ Ո Ւ Խ

Ֆրէզնօ ՖիելԷ Բուսնի,

Թիւ 102 Օ փողոց, Թէլեֆոն մէյն 299

Մեծաքանակ և փոքրաքանակ

Պէնք ալ Թոշարս

Թուլարա, Բալիֆօրնիա.

Վճարեալ գրամագլուխ 50,000 սոլար
Յաւելում՝ 35,000 սոլար

Պաշտօնեայք: Ի. Լէյթրըպ՝ նախագահ, Ճ.
Կոլտմըն՝ փոխ-նախագահ, Լ. Լ. Էյլըբըրօն-
պի՝ գանձապահ, Ու. Փ. Ուիլմս՝ փոխ-գան-
ձապահ, Վարրչներ: Ի. Լէյթրըպ, Ճ. Կոլտ-
մըն, Ճ. Հ. Մօրթըր, Տ. Պ. Մօօր, Ճ. լըՄարշ
Թուլարայի Հայերը տարիներէ ի վեր
այո գրամատան հետ կընեն իրենց գրամա-
կան բոլոր գործողութիւնները: Ամենաապա-
հով տեղն է վստահելի տեղեկութիւններ
ստանալու տեղական ամեն տեսակ կալ-
ուածներու նկատմամբ:

Տօրսիյ-Բապիւնըն Բօ.

1155 Ճէյ փողոց Ֆրէզնօ.

Թէլեֆոն մէյն 15.

Ունին ծախու

Երբէք Ֆրէզնօ բերուած ամենալաւ
ԼԵՐԱՆ ԿԱՂՆԻԻ

Փ Ա Յ Տ

Նմանապէս Ուիլիսկիթըն, Բաք ըՄփրինկս և
.. .. Էնթրէսիթ հանքային .. ..

Ա Մ Ո Ւ Խ

Եկուր տես այս տպրանքները: Եատ
գնողներու համար զեղջ: Փայն պաք ալունինք

- ՀԱՅ -

Մի գներ ուրիշէն

մեր պատրաստածները տեսնալէ առաջ
Ոչ մի հացագործ կրնայ մրցիլ հիմայ մեզի
հետ: Պարապ խօսք չէ աս. հինգ սէնթով
կրնաս փորձ մ'ընել և համոզուիլ:
Ուրիշներէ միս գնէ բայց մեր հացը կեր.
Նիի ԻՆԿԻԼՆՏ ՊԷՑՔԸՐԻ
Ա. Ատուրեան և Ընկ.
1323 Քըրն փողոց, Թէլեֆոն մէյն 2537

Տիկին Մ. Շիւնլըն

ԾԱՂ ԿԱՎԱՃԱՌ և ՉԱՐԴԱՐԻՉ


Թէլեֆոն մէյն 340,

- Բնակարանի Թէլեֆոն մէյն 1074 -
1145 Ա. փողոց, Ֆրէզնօ, Բալ.

George Brothers,

(ՃԻՀԱՆՇԱՀԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ)

Ճէյ և Մարիփոգա Փողոցներուն անկիւնը,
Ֆ Ր Է Չ Ն Օ, Բալիֆօրնիա.



Աշնան և Չմրան յատուկ ապրանքներ
- Ամեն ինչ նոր և ապահովեալ -

Հագուստ, գլխարկ, շապիկ, ներքնզգեստ,
փողպատ, պայուսակ, գուրպայ, ձեռնոց, ևն.

Սյն ապրանքին վրայ որ այս տունին
անունը դրօշմուած է, ապահովութիւն, վըս-
տահութիւն և համբաւ շահած ունի այս
գաւառիս ժողովրդեան մէջ ամեն կողմ:

- Հայոց համար մասնաւոր զեղջ -



ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ  
Կ Ո Ւ Ս Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՑՔ

Կուսակցութիւնը ներշնչուած 20րդ դարու լուսաւոր գաղափարներէն, իր քաղաքական դաւանանքին իբր հիմ և իր գործունէութեան իբր գլխաւոր նպատակակէտ կ'ընդունի ժՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԳԵՐԻՇԵՍԱՆՈՒԹԻՒՆԸ: "Կառավարութիւնը ժողովուրդն է" — ահա նշանաբանն ամէն ռամկավարական երկիրներու, նոյնը պարտի ըլլալ և Օսմ. Պետութեանը:

Օսմ. պետութիւնը բաղկացած ըլլալով բազմազան տարրերէ, որք ծագմամբ, կրօնքով, լեզուով աւանդութիւններով և սովորութիւններով իրարմէ կ'տարբերին, ասոնց մէջ միաձուլում յառաջ բերելու ձգտող քաղաքականութիւն մը ո՛չ միայն անիրականաբար պիտի ըլլար, այլ և սեծ ապէս փլուսակար Օսմանեան Պետութեան շահերուն:

Այս գանազան ազգութիւնները՝ իբր Օսմ. քաղաքացիներու որոշ համախմբումներ՝ ընդունելով երկրին ամբողջութիւնն և քաղաքական անբաժանելիութիւնը, իբրև հասարակաց հայրենիք, որուն հանդէպ ունին նոյն հաւասար իրաւունքներն և պարտականութիւնները, միևնոյն ժամանակ պէտք է պահպանեն և երաշխաւորութեան տակ դնեն իրենց ազգային առանձնայատկութիւններն և իրաւունքները: Մեծամասնութիւն կազմող տարրը պէտք է յարգէ փոքրամասնութիւններու այս կարգի անվիճելի իրաւունքները՝ ազգութեանց հաւասարութեան սկզբունքով: Արդարև՝ Սահմանադրական-Տրամկավարական սկզբունքները չեն ժխտեր ազգերու ինքնորոշման իրաւունքը, անոնց ներքին կամ տեղական իրաւասութիւնները: Ընդհակառակն՝ այս իրաւանց ապահովումն է եղած միակ միջոցը բազմազան ազգութիւններէ կազմուած պետութիւններու անդորրութեան և յառաջդիմութեան:

Այս տեսութեամբ, հայութիւնը կը ներկայանայ Թուրքիոյ մէջ երկու որոշ հանգամանքով. — իբրև Օ ս մ . Ք ա ղ ա ք ց ի ու թ իւ ն և իբրև Հ ա յ Ա զ գ ա յ ու թ իւ ն : Այս 2 հանգամանքները պէտք է միասին գոյութիւն ունենան, առանց իրարու հետ շփոթուելու, առանց իրար հակասելու:

Հարկ չկայ ըսել թէ ազգային անհատականութեան պահպանման և զարգացման պահանջն երբէք ազգայնամուլ և այլամերժ ինքնասիրութիւն մը չէ և ո՛չ ալ իբր անկատարական ձգտում պէտք է մեկնուի. այլ նոյն ազգային ինքնագիտակցութեան և զարգացման իրաւունքները պէտք է վայելին անխտիր և հաւասարապէս Թուրքիոյ բաղկացուցիչ բոլոր մեծ և փոքր ազգութիւնները, և ասոնց բոլորին լայնախոհ համերաշխութեամբը և ազատամիտ եղբայրակցութեամբն է որ կարելի պիտի ըլլայ իւրաքանչիւրին առանձին և ազատ զարգացումը, որ ամենէն ապահով միջոցն է երկրին ընդհանուրին զարգացմանն և երկրին ընդհանուր բարգաւաճմանը:

Այս սկզբունքով է որ կուսակցութիւնն կը կանգնի ջատագով "Ազգային իրաւունքներու Պահպանման և Զուտ Վարչային Ապահովորոնացման Դրութեան":

Հայ Սահմանադրական-Տրամկավար Կուսակցութիւնը, ձըգտելով առնել 'Ազգային' կուսակցութեան մը նկարագիրն և հանդիտանալ Հայ ժողովրդի 'Ազգային Քաղաքականութեան' արտայայտիչը, իր մշտական ջանքը պիտի ըլլայ համերաշխութիւն գոյացնել Հայ Ազգին բոլոր դաւանական յարանուանութիւններուն և բոլոր դասակարգերուն մէջ, և կարելիութեան սահմանին մէջ ներդաշնակել անոնց շահերը: Առանց այդպիսի ազգային համերաշխութեան մը՝ դժուար պիտի ըլլար ապահովել մեր ազգային շահերու պաշտպանութիւնը և անպայմանօրէն պիտի դանդաղէր մեր բնատոկմիկ յառաջդիմութեան գործը: (Շարունակելի) 2

ԿԱՎՈՇԻՆ ՍԻՒՆԱԿԸ

\*\*\*\*\*

Ֆրէզիօ, Տեկտ. 99, 2578

Խմբագիր, — Մեղքս չը պահամ, ինծի փորի ցաւ սկսեր են պատճառել այն քանի մը մեծամտութեամբ փքած պարոնները որոնք Ամերիկացուց ըսածին պէս — Տէյ աբ Իթ: Թէ ովքեր են անոնք՝ չեմ կրնար ըսել, քանզի վստահ եմ թէ Թող չէք տար ինձ անուններ գարծածել: Թերևս իրաւունք ունիք, բայց ես այդ իրաւունքը չուզելով է որ կը յարգեմ: Ախ, երանի էր որ կարենայի շարաթ մը ուզածս անարգել գրել: Բայց ինչ որ ալ ըլլայ՝ գիւրին չէ խմբագրի մը պատասխանատուութիւնները շարկել: "Թան չէ, ամեն մարդու բան չէ" կըսէ գաւառական առածը:

Բայց իմ ակնարկածս պարոնները կրնամ ծանօթացնել ընթերցողին խորհրդարանական լեզուով որ ձուկի պէս սահուն ըլլալով՝ երբեք չի բռնուիր: Երբ հանդիպիս փողոցին վրայ փըքուն, հպարտ մէկի մը որ աչքի պոչով կը նայի քեզ ու հագիւ գլխի միտինարական անզգալի շարժումով մը կը զիջանի բարեւել, գիտցիր որ մէկն է ակնարկածս պարոններէն: Անոր նայուածքին մէջ սա արտայայտութիւնը կայ "Սուրաթիդ նալլէթ, բարեւելու չէի բնաւ": Ասոնց մէկի պղտիկութեան մասին հետեւեալը լսեք եմ. Սա տղեկը Քերականութիւն կարդացած ատեն՝ վարժապետը կը հրամայէ որ էական բայը խոնարհէ. տղան կըսկի այսպէս. "Սահմանական եղանակ, ամեն ժամանակ, Ես եմ, ես էի, ես ըրի, մենք ենք, մենք էինք, և ըրինք": Վարժապետը ի գուր տեղը կը ջանայ տղուն սխալը շտկել, որ տակաւին կը շարունակէ իրեններուն հեն նոյը խոնարհել թութակօրէն — մենք ենք, մենք ըրինք:

Հըպարտութիւնը գէշ բան է սակայն. ինքնահաւանին թըշնամին Աստուած է կըսեն: Այսպիսիք յիշելու են Ամերիկեան սա առածը — Եթէ կուզես գիտնալ թէ մարդիկ ո՛ր աստիճանի քու ներկայութիւնդ կըզգան, գլուխէդ, եթէ տազ չես, մազ մը քաշէ և տես թէ ճաղատ կըլլաս:

— Մայ, մայ, մայ. ինչեր կը խօսին ինծի համար, ինչ ըս պառնալիքներ կը զրկուին հասցէիս: Եթէ կեղծ անունով հրապարակ չեսնէի՝ բանս բուսած էր հիմայ: Ուրախ եմ որ չեն ճանաչեր զիս մարդիկ, բայց կը ցաւիմ որ Քաղաքացին պիտի ենթարկուի այն քննադատութեանց որք ինձ կը վերաբերին իրաւամբ: Սակայն դուք վարժուած էք յարձակումներու, պ. խմբագիր, ու կրնաք քիչ մը ատեն իմ բեռս ալ տանիլ, այնպէս չէ: Այո, վստահ եմ այդ մասին, դեռ անցեալ օր մէկը կը ջանար զձեզ խածնել հտուէն. բայց չեմ գիտեր ինչ եղաւ հետեւութիւնը. կամ մէկի վանթարունէն կտոր մը փրթեցաւ և կամ միւսին ակունները փշրեցան: Կոչկակար ըլլալը շտակ խօսող խմբագիր ըլլալէն չատ շահաւոր է:

— Անցեալ կիրակի երեկոյ, առաջին անգամը ըլլալով, պահ մը գէշ զգացի ամուսնացած ըլլալու համար՝ երբ Այնթապի հօլի ժողովին ներկայ գտնուեցայ: Ահռելի խնդիր մը ներկայացուեցաւ մեզ ու պարտք դրուեաւ մեր վրայ շարիքը դարմանել: Բայց աւելի բանաւոր պիտի չըլլար կիներուն թողուլ այդ փափուկ խնդրի կարգադրութիւնը: Կարողութիւն յանձնախմբին:

— Ստացած եմ հասցէները այս պարոններուն զորս կը փըշուռէի անցեալները: Երբ ժամանակ ունենամ՝ կը թղթակցիմ անոնց հետ, առանց սակայն Քաղաքացիի ընթերցողները մոռնալու: Աճապարելու հարկ չկայ. համբերեցէք քիչ մը. դեռ շատերու հասցէները պիտի փնտռեմ՝ եթէ Քաղաքացին բերանս չը բռնէ՝ գոնէ գալիք մէկ տարին համար:

— Ինչ խնդրուած է Նոր Տարիի առթիւ քանի մը նուէրներ բաժնեմ մեր ակնաւոր և անակն այն բարեկամներուն, որոնք մոռցուած են թերևս խաֆած Սանթա Քլոսէն: Ընդունիմ այս ծանր խնդրը, ազիւ ընթերցող: — Նայինք: ԿԱՎՈՇ